ԼՂԻՄ. ԱՐՑԱԽԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է

Հոկտեմբերի 10-ին Ստեփանակերտում տեղի ունեցած ողբերգական միջադեպի կապակցությամբ Լեռնային Ղարաբաղում արդարացի բողոքի ալիք է բարձրացել: Արցախյան շարժման ժամանակամիջոցում առաջին անգամ իճճնավար մարզի տարածքում զինծառայողների ձեռքով զոհվեց հայ բաղաքացի՝ արտադրական կոմբինատի բանվոր Սպարտակ Առաքելի Հակոբյանը: Զոհվեց անիմաստ կերպով, այն բազմաթիվ պատահական զեղակներից մեկի անմեղ զոհը դառնալով, որ այդ օրը այնքան շռայլորեն արձակում էին Սվերդլովսկի հրշեջ-տեխնիկական ուսումնարանի կուրսանտները: Մարդիկ պահանջում են հայտնաբերել և խստագույնս պատժել այդ պրովոկացիոն ձեռնարկման կազմակերպիչներին և կատարողներին, որը, ինչպես այստեղ կարծում են, նպատակ ուներ էլ ավելի ապակայունացնել ռեգիոնի իրադրությունը, դրանով իսկ ձգձգելով ԼՂԻՄ-ի պրոբլեմի բաղաքական լուծումը:

Մարզային կենտրոնի հազարավոր սովորողներ իրենց դասատուների և ծնողների հետ միասին հոկտեմբերի 12-ին բողոքի միտինգ անցկացրին Հաղբանակի հրապարակում: Ելույթներում կոչ էր արվում պահպանել տոկունություն և համբերություն, չենթարկվել պրովոկացիաների և չձախողել պարապմունքները դպրոցներում: Նրանք ափսոսանքով էին խոսում այն մասին, որ մեր երկիրը, որը հանդես է գալիս բոլոր ժողովուրդների մատաղ սերնդի պաշտպանության, նրա երջանիկ ապագայի օգտին, ասես մոռացության է մատնել Լեռնային Ղարաբաղի երեխաներին: Այսօր պատանի արցախցիները ստիպված են գիշերները չքնել, անհանգստանում են իրենց ծնողների համար: Միտինգի մասնակիցները հայտարարեցին, որ ոչ մի պրովոկացիա չի կարողանա սեպ խրել տեղական բնակիչների ու զինծառայողների փոխհարաբերությունների մեջ: Նրանք վստահություն հայտնեցին, որ ճշմարտությունը միևնույն է իր համար ճանապարհ կբացի: Միտինգի մասնակիցները դիմեցին ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ պահանջելով արագացնել Ղարաբաղի հարցի բաղաքական լուծումը: Միայն այդ դեպքում Արցախի երեխաները կկարողանան հանգիստ քնել:

Միջադեպի առթիվ հոկտեմբերի 12-ի երեկոյան բացատրություններով մարզային հեռուստատեսությամբ հանդես եկան հատուկ շրջանի պարետ, գեներալ-մայոր Վ. Ն. Սաֆոնովը և ԼՂԻՄ-ի ներքին գործերի վարչության պետ, գեղապետ Ռ. Ս. Թումանյանցը: Պարետը մասնավորապես ասաց, որ ողբերգական պատահարը հետևանք է այն բանի, որ ինչպես ավտոշարասյունը քարկոծողները, այնպես էլ զրահի պատասխան գենքի գործադրողները իրենց անզուսպ են պահել, թերագնահատել կամ լավ չեն իմացել ռեալ վիճակը: Նա հաղորդեց, որ զեղակներ են արձակել 21 կուրսանտ և երեք սպա, բեղունելով, որ նման միջոցի դիմելու հարկ չի եղել: Զինվորական ավտոշարասյան դեկավարությունը սխալ է գնահատել հարձակմանը նախորդած իրադրությունը:

Պատասխանելով թղթակցի այն հարցին, թե որքանով էր իրավաբար քաղաքի այն շրջաններում կրակ բացելը, որտեղ շարասյանը ոչ ոք չէր սպառնում, գեներալ Վ. Սաֆոնովն ասաց, որ դրա վերջնական պատասխանը կտան քննչական մարմինները, բեղսմին բեղգծելով, որ կուրսանտների մեջ երրազենով վիրավորվածներ չկան: Նրանցից մի քանիսը միայն թեթև մարմնական վնասվածքներ են ստացել: Մենք մտադիր չենք փրկել համազգեստի պատիվը, ասաց պարետը: Պատահարի համար մեղավորները կպատժվեն: Նա հերքեց այն մեղադրանքները, թե միջադեպը վազորոք կազմակերպված է եղել ի հանույթ բաղաքական ընդդիմակների, և բնակչությանը կոչ արեց հանգստություն պահպանել, փոխըմբռնում դրսևորել և չխախտել իրավակարգը: Գեներալ Վ. Սաֆոնովը ցավակցություն հայտնեց անմեղ զոհված Ս. Հակոբյանի հարազատներին ու մերձավորներին:

Գեղապետ Ռ. Թումանյանցը իր ելույթում նշեց, որ հատուկ շրջանի պարետությունը տեղական իրավապահ մարմիններին չէր ծանուցել այն մասին, որ բաղաքի միջով ավտոշարասյուն է անցնելու: Նրանք այդ մասին իմացան միայն միջադեպի պահին, ուստի չկարողացան համապատասխան նախազգուշական միջոցներ ձեռնարկել: Նա նաև հաղորդեց, որ 506 կրակոց է եղել ավտոմատով և 28՝ ատրճանակով: Տուժել են միայն այն մարդիկ, ովքեր պատահաբար են հայտնվել ավտոշարասյան հանապարհին:

«Արյունոտ երեքշաբթի»՝ ստեփանակերտցիները այսպես կնշեցին հոկտեմբերի 10-ի օրը: Իսկ այսօր՝ հոկտեմբերի 13-ին ամբողջ բաղաքը հուղարկավորեց այդ միջադեպի զոհին՝ շուրջ երեխաների հորը, 39-ամյա աշխատավոր դարբաղցուն՝ Սպարտակ Հակոբյանին: Սգո միտինգի մասնակիցները, դատապարտելով այդ պրովոկացիոն ձեռնարկումը, հավաստեցին, որ ոչ մի հակաղարաբաղյան գործողություն չի բեկեի Արցախին, բանգի աննկուն է իր ազատության համար պայքարող նրա ժողովրդի կամքը:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)
Ստեփանակերտ

Ստեփանակերտցիներին Հայաստանից անհրամթերք է ուղարկվում այս միջոցով:

Լուսանկարը՝ Արմենպրեսի